



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի չորրորդ եռամսյակում (վերլուծություն)

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 58356 գործարք, որոնց քանակը 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.0 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 10.0 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14119 օտարման գործարքների 75.2 %-ը կազմել է առուվաճառքը, 24.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.3 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի չորրորդ եռամսյակում, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.3 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 4.4 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի չորրորդ եռամսյակում, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.2 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 8.5 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Չորրորդ եռամսյակ 2013 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282600	282700	282700
Նոր Նորք	251900	252800	252600
Ավան	260000	260200	260200
Էրեբունի	250000	251000	250900
Շենգավիթ	255600	256700	256400
Դավթաշեն	275000	275200	275200
Աջափնյակ	248900	249600	249600
Մալաթիա-Սեբաստիա	241900	242500	242400
Նուբարաշեն	153900	156150	156000
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	273100	273800	273700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.04 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1223 բնակարան, որի քանակը, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 3.0 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 7.8 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Չորրորդ եռամսյակ 2013 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115000	116000	116000
	Ապարան	57100	57550	57500
	Թալին	64900	65900	65850
Արարատ	Արտաշատ	95000	97000	96700
	Մասիս	115000	115750	115650
	Վեդի	99900	100700	100700
	Արարատ	75200	75500	75400
Արմավիր	Վաղարշապատ	154150	154150	154150
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59800	59850	59800
	Մարտունի	107600	107700	107650
	Վարդենիս	44700	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55050	55000
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20200
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128600	128600
	Բյուրեղավան	108150	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109400
	Հրազդան	63800	63850	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85550	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66500	66700	66700
	Մարալիկ	40600	40700	40700
Սյունիք	Գորիս	121700	122500	122300
	Կապան	92200	93150	92900
	Սիսիան	91150	91300	91150
	Մեղրի	80700	81000	80900
	Ագարակ	46850	46900	46900
	Քաջարան	94650	94700	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	95000
	Եղեգնաձոր	124800	125550	125500
	Ջերմուկ	112500	112950	112900
Տավուշ	Դիլիջան	113150	113600	113200
	Իջևան	118300	118300	118300
	Բերդ	60200	60250	60200
	Նոյեմբերյան	49900	49900	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ համեմատ, աճել են 0.1 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 1492 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 442 գործարք, մարզերում՝ 1050 գործարք: 2014 թվականի չորրորդ եռամսյակում, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 17.0 %-ով, ընդ որում, Երևանում՝ 24.5 %-ով, մարզերում՝ 14.1 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 18.5 %-ով, իսկ մարզերում՝ 1.0 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Չորրորդ եռամսյակ 2013 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239700
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150700
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286600	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Չորրորդ եռամսյակ 2013 թ.	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Զերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4976 միավոր (2157.35 հա) հող, որից Երևանում՝ 434 միավոր (58.21 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2863 միավոր (1932.14 հա), որից Երևանում՝ 29 միավոր (2.28 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1437 միավոր (158.40 հա), որից Երևանում՝ 223 միավոր (40.15 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 491 միավոր (38.17 հա), որից Երևանում՝ 169 միավոր (12.75 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 60 միավոր (9.79 հա), որից Երևանում՝ 13 միավոր (3.04 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր (12.09 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 108 միավոր (3.75 հա),
- ջրային հողեր՝ 2 միավոր (3.01 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում օտարված հողերից 3966 միավորի (1798.16 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 365 միավոր (51.23 հա), նվիրատվության գործարքներ՝ 986 միավոր (348.43 հա), որից Երևանում՝ 64 միավոր (4.58 հա) և փոխանակության գործարքներ՝ 24 միավոր (10.76 հա), որից Երևանում՝ 5 միավոր (2.40 հա):

Հանրապետությունում 2014 թվականի չորրորդ եռամսյակում 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 0.7 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 20.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 457.06 հա, որից 434.54 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.7 %-ը կամ 899 միավորը (331.69 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 108 միավոր (3.45 հա), իսկ 76.6 %-ը կամ 3036 միավորը (1460.16 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 251 միավոր (47.47 հա): 2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 31 գործարք (6.32 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակությամբ և հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	6	0.25	38	1.34	64	1.87	18	1.34	7	2.79	140	36.68	86	6.67
Արագածոտն	36	48.61	0	0.00	9	0.86	12	0.30	179	166.40	0	0.00	64	6.92	8	0.16
Արարատ	41	93.51	1	0.29	27	0.96	16	0.60	350	127.51	4	0.53	138	12.08	10	0.17
Արմավիր	34	20.25	1	0.03	9	0.52	8	0.23	444	414.29	1	0.10	176	18.97	9	0.14
Գեղարքունիք	9	8.04	4	1.44	28	2.41	29	2.39	109	74.23	0	0.00	48	6.77	2	0.21
Լոռի	10	6.01	2	0.09	35	0.85	28	1.24	240	139.48	2	0.10	22	1.80	4	0.14
Կոտայք	62	89.63	6	0.65	92	5.78	42	2.09	282	170.75	4	0.56	195	21.61	35	2.10
Շիրակ	1	0.27	3	0.43	13	0.21	8	0.24	122	130.98	2	0.26	38	6.41	6	0.55
Սյունիք	5	4.12	4	0.31	3	0.07	4	0.12	102	58.21	3	1.11	16	1.20	2	0.71
Վայոց ձոր	17	14.73	0	0.00	6	0.52	7	0.21	50	21.75	0	0.00	16	1.71	4	0.31
Տավուշ	16	5.20	3	0.29	24	2.30	25	1.24	52	16.18	0	0.00	29	2.19	12	5.11
Ընդամենը	231	290.37	30	3.78	284	15.82	243	10.53	1948	1321.12	23	5.45	882	116.34	178	16.27

Ստորև ներկայացվում է 2014 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	62	1.37	5	0.09	25	0.69	32	0.59	46	2.09	0	0.00	1	0.16	13	0.65	32	1.28
Արագածոտն	3	0.054	0	0.00	1	0.05	2	0.004	52	49.25	34	48.14	0	0.00	8	0.81	10	0.30
Արարատ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	83	95.18	40	93.34	1	0.29	27	0.96	15	0.59
Արմավիր	3	0.033	0	0.00	2	0.03	1	0.003	48	19.92	33	19.16	1	0.03	7	0.50	7	0.23
Գեղարքունիք	6	0.39	0	0.00	3	0.17	3	0.22	63	13.19	8	7.34	4	1.44	25	2.24	26	2.17
Լոռի	28	0.37	0	0.00	12	0.18	16	0.19	47	7.83	10	6.01	2	0.09	23	0.68	12	1.05
Կոտայք	4	0.32	0	0.00	2	0.01	2	0.31	197	97.78	61	89.58	6	0.65	90	5.77	40	1.78
Շիրակ	2	0.03	0	0.00	1	0.02	1	0.01	22	0.86	0	0.00	3	0.43	12	0.20	7	0.23
Սյունիք	2	0.05	0	0.00	0	0.00	2	0.05	14	4.57	5	4.12	4	0.31	3	0.07	2	0.07
Վայոց ձոր	3	0.20	0	0.00	0	0.00	3	0.20	27	15.27	17	14.73	0	0.00	6	0.52	4	0.02
Տավուշ	5	0.292	2	0.24	1	0.002	2	0.05	60	7.89	13	4.35	1	0.05	23	2.30	23	1.19
Ընդամենը	119	3.12	7	0.33	47	1.15	65	1.64	659	313.83	221	286.77	23	3.45	237	14.70	178	8.91

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 10 գործարք (3.60 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի չորրորդ եռամսյակում, 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 10.2 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 24.6 %-ով, իսկ մարզերում աճել է 14.1 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 30.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 41.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 27.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել 2.1 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2014 թվականի չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	20	35.07	63.9	1214.3	583.1	101	50.26	365.0	12000.0	3706.8
Ապարան	1	0.44	140.5	140.5	140.5	16	9.34	86.5	2727.3	667.1
Թալին	13	12.62	70.9	125.9	105.3	33	37.63	93.6	5494.5	750.1
Ծաղկահովիտ						27	68.30	79.5	1000.0	324.7
Արարատի մարզ										
Արտաշատ	6	4.35	115.8	1285.6	286.3	188	58.13	335.1	10833.3	2569.3
Մասիս	4	4.80	62.9	417.3	248.0	52	16.89	200.0	11904.8	2981.2
Վեդի	30	84.19	30.1	12000.0	2214.9	103	46.44	207.0	10795.1	1826.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	24	15.64	58.3	1062.6	281.0	222	149.13	294.3	9090.0	1203.5
Բաղրամյան	4	2.00	67.5	70.9	70.0	51	146.33	90.6	2561.1	844.4
Վաղարշապատ	5	1.52	70.3	2262.9	1069.0	161	112.18	444.4	11764.7	1956.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						75	13.55	199.8	1875.0	441.8
Ճամբարակ	3	2.00	1164.5	1463.8	1329.3	1	0.17	60.5	953.3	355.2
Մարտունի	2	1.62	128.6	128.6	128.6	8	1.28	51.1	2850.0	778.4
Սևան	1	0.02	2166.7	2166.7	2166.7	1	0.34	52.2	2134.8	328.5
Վարդենիս	2	3.70	57.1	316.8	187.0	21	56.08	41.2	2575.1	418.4
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.08	524.7	524.7	524.7	19	10.32	170.4	6424.2	598.7
Գուգարք	5	0.83	186.7	1154.8	435.3	104	28.97	234.6	6065.9	800.7
Սպիտակ	1	0.12	687.7	687.7	687.7	10	2.90	250.0	5555.5	705.5
Ստեփանավան	1	0.66	1159.8	1159.8	1159.8	32	20.45	90.6	1686.6	357.8
Տաշիր	2	4.32	452.8	805.2	629.0	72	75.42	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	13.36	70.9	3750.0	343.9	98	35.74	279.3	11942.7	4044.5
Եղվարդ	34	54.64	72.7	9750.0	774.1	130	99.42	174.4	11971.8	2413.5
Հրազդան	14	21.58	147.5	1980.0	516.8	48	32.18	130.5	10256.4	1257.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						46	34.98	252.0	1693.1	608.3
Ամասիա						3	10.75	40.9	261.0	130.0
Անի						43	53.44	110.6	546.9	431.1
Աշոցք						7	9.58	58.5	215.8	134.9
Արթիկ						22	21.88	79.4	1428.6	472.6

Սյունիքի մարզ										
Գորիս	3	1.17	131.4	1884.6	715.8	18	17.12	92.6	1023.2	768.3
Կապան	2	2.94	77.0	1143.9	610.5	22	4.45	120.0	841.6	387.0
Մեղրի						7	1.20	193.0	3000.0	749.8
Սիսիան						51	30.69	46.3	1977.4	566.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	9.48	21.7	730.3	211.1	26	12.67	125.0	10000.0	1847.5
Վայք	5	5.25	69.0	215.2	172.8	24	9.08	58.8	1430.7	630.5
Տավուշի մարզ										
Բերդ						32	8.22	213.3	3783.8	690.0
Իջևան	10	1.91	153.5	3300.0	1419.9	13	3.68	267.5	9454.5	1327.0
Նոյեմբերյան	3	2.44	133.4	1356.8	767.3	7	4.27	46.7	7368.4	954.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	4777.5	112.7	3846.2	1366.6	49	51066.0	130.7	22200.0	2585.8
Ապարան	1	317.0	563.1	563.1	563.1	9	9267.0	124.1	609.6	391.1
Թալին	1	2974.0	63.9	63.9	63.9	5	7640.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	7	7377.5	235.0	542.1	467.6	41	38761.6	173.9	7140.3	904.8
Մասիս	16	1028.6	794.2	5023.3	3331.6	60	48417.1	187.5	25000.0	1213.2
Վեդի	4	1144.5	271.8	1496.1	1077.2	32	28453.0	126.1	5000.0	664.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	1737.8	1305.5	3822.0	1937.0	63	77722.0	131.6	9090.9	1213.6
Բաղրամյան	2	2217.0	233.1	233.5	233.3	5	6600.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	1000.0	95.9	95.9	95.9	102	98537.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	13	15137.7	124.5	133.6	125.3	16	20049.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	2	207.1	310.0	373.3	341.7	1	1008.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	6	4028.0	165.0	393.9	293.2	18	21084.1	119.3	5000.0	285.5
Սևան	1	1000.0	1210.9	1210.9	1210.9			240.0	3110.4	330.0
Վարդենիս	3	2038.3	49.5	198.0	141.1	10	20802.6	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	5	578.7	1320.2	1800.0	1605.3	4	3490.0	114.3	1388.9	217.4
Գուգարք	15	4667.7	210.0	5204.7	1295.5	10	5947.2	77.9	14083.3	1260.1
Սպիտակ	2	857.6	151.9	1029.1	590.5	5	5600.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան	1	651.8	253.2	253.2	253.2	1	650.0	88.2	1666.7	175.7
Տաշիր						2	2300.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	80	50998.4	351.2	5437.5	3157.7	99	73149.5	264.5	35353.5	2021.7
Եղվարդ	9	5375.2	1279.5	4599.0	2755.8	79	128001.0	173.6	27000.0	2869.1
Հրազդան	1	1295.0	817.7	817.7	817.7	17	14921.0	117.7	34848.5	1322.8

Շիրակի մարզ										
Ախուրյան	9	1710.6	580.8	5538.8	3658.5	14	25801.3	113.6	18750.0	336.3
Ամասիա						1	3223.3	45.3	274.7	72.0
Անի	2	63.0	629.6	655.0	642.3	9	14795.7	67.9	180.6	190.0
Աշոցք						1	6380.0	40.8	144.0	65.0
Արթիկ	1	203.2	224.5	224.5	224.5	13	13860.3	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	334.6	298.9	298.9	298.9	2	1189.0	112.2	1700.0	370.0
Կապան	1	119.5	1690.1	1690.1	1690.1	6	4116.0	67.9	2638.9	335.3
Մեղրի						6	4293.0	68.5	632.9	234.2
Սիսիան	1	235.0	660.0	660.0	660.0	2	2420.0	123.5	875.0	226.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	5243.6	158.4	396.4	277.4	14	15122.3	96.7	7659.6	511.0
Վայք						2	2010.0	120.7	1448.3	242.5
Տավուշի մարզ										
Բերդ						4	2929.4	75.8	810.0	123.4
Իջևան	21	21537.7	244.2	3000.0	2544.6	18	11487.7	74.1	14423.1	551.2
Նոյեմբերյան	2	1481.2	241.2	850.7	546.2	5	5920.0	125.0	1948.1	237.3

2014 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2144 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.7 %-ը:

2014 թվականի չորրորդ եռամսյակում, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 6.7 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 3.2 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 151 բնակարանի, 248 անհատական բնակելի տան, 930 հասարակական նշանակության, 231 արտադրական նշանակության օբյեկտի, 535 միավոր հողի, 48 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 18 վարձակալության գործարքների քանակը, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 63.6 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 52.6 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 830.52 հա հողերից 12.56 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 817.96 հա հողերից 650.37 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 35.49 հա արդյունաբերական օբյեկտների, 1.96 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 201.21 հա, որից 78.24 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6780 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.6 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 7.1 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 7.1 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.6 %), անհատական բնակելի տների (24.2 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.0 %) և հողերի (7.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3869 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 8.9 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 0.9 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 762.37 հա հող, որից 41.37 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 81.4 %-ը կամ 620.40 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 1.32 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Կոտայքի մարզում՝ 199.50 հա, որից 133.74 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 448 գործարք, որից 311-ը՝ Երևանում: 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 1.1 %-ով, ընդ որում Երևանում՝ աճել 8.0 %-ով, մարզերում՝ նվազել 17.0 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 16.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 13.1 %-ով, մարզերում՝ 22.2 %-ով:

2014 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 6001 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2014 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.5 %-ով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 0.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.6 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (21.5 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե